

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ

**Ք.Երևան
Ժ.11.00**

20 դեկտեմբերի 2010թ.

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ 2010 թվականի դեկտեմբերի 20-ին գումարված Երևանի ավագանու հանդիսավոր նիստում տեղի ունեցավ Երևանի նորընտիր քաղաքապետ Կարեն Կարապետյանի երդմնակալության արարողությունը:

Հանդիսավոր նիստին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց կաթողիկոսը, ԱԺ նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաները, Երևանի նախկին քաղաքապետներ, Երևանի պատվավոր քաղաքացիներ, պետական, հասարակական, քաղաքական, մշակութային գործիչներ:

Համաձայն Երևանի ավագանու կանոնակարգի 124-րդ կետի՝ նիստը վարում էր Երևանի ավագանու ավագ անդամ Աստղիկ Գևորգյանը:

Երևանի նորընտիր քաղաքապետ Կարեն Կարապետյանը երդվեց քաղաքապետի լիազորությունները իրականացնելու ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, Երևանի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել Երևանի քաղաքապետի լիազորությունները, ծառայել Երևանի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների: Համաձայն Երևանի ավագանու կանոնակարգի 125-րդ կետի՝ Երևանի քաղաքապետի երդման ստորագրված տեքստն ի պահ հանձնվեց Երևան քաղաքի թանգարանին:

Երևանի պատվավոր քաղաքացի, Երևանի ավագանու անդամ Մարտին Վարդազարյանը Երևանի քաղաքապետի խորհրդանիշ հանդիսացող լանջաշղթան՝ հայոց տասներկու մայրաքաղաքների անվանատառերով, հանձնեց նորընտիր քաղաքապետ Կարեն Կարապետյանին:

Պաշտոնապես իր պարտականությունները ստանձնած քաղաքապետ Կարեն Կարապետյանին շնորհավորեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ արքեպիսկոպոսը, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը:

Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանը նիստը հայտարարեց փակված:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ